ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/275

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 01.12.2020թ.-ի թիվ 02/16.4/9006-2020 գրության հիման վրա, 08.12.2020թ.-ին «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 08.12.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 08.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/275 համարի ծածկագիրը:

17.12.2020թ.-ին և 30.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 17.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.12.2020թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 01.12.2020թ.-ի թիվ 02/16.4/9006-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 22-ին հայտարարված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել նաև «Գևորգյան և Ներսիսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը և «ԳԵՈՐԳՅԱՆ և ՆԵՐՍԻՍՅԱՆ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություններ):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությունները ծանուցվել են մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերությունների հայտերը մերժվել են:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերությունների տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 09.12.2020թ.-ի գրությամբ դիմել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 17.12.2020թ.-ի նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը 25.12.2020թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/275 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

ա) «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը.

«1-ից 17-րդ տողերում բացակայում է արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը: Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել 1.1 կետով նշված մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ինչը Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2020թ. նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ի 1-ից 9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդորակիչների ներքին բլոկ:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները գնահատող հանձնաժողովը որոշում է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Եվ այսպես, թիվ 2-3 արձանագորության ուսումնասիրությունը ուղղակիորեն հետևում է, որ այստեղ ընդամենը նշվել է, որ 1-ից 17-րդ տողերում բացակայում է արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը և առաջարկվել է կատարել համապատասխան շտկում: Բայց, թև ինչ շտկում է ակնկալում, այդպես էլ մնում է անհայտ: Ավելին, մասնակցի կողմից շտկում կատարելուց հետո այս անգամ էլ որպես հայտը մերժելու հիմք նշվել է, որ Հավելված 1.1-ի 1-ից 9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդորակիչների ներքին բլոկ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը, ըստ արտադրող ընկերության պաշտոնական կայքի տեղեկատվության, հանդիսանում է կանալային օդափոխիչ, ըստ համապատասխան հղման՝ http://www.mitsubishielectric.com.ua/pead-rp-jalq.html:

Բացի այդ, պետք է փաստել, որ Ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը պետք է ՏԵՂԱԴՐԻ կանալային օդափոխիչ, և ըստ էության Հրավերում ոչ մի տեղ նշված չէ, թե այդ օդափոխիչը պետք է մատակարարվի ՍՊԸ-ի կողմից, թե տրամադրվի Պատվիրատուի կողմից:

Ավելին, Ընթացակարգի հրավերում բացակայում է որևէ պահանջ, որ Ընկերությունը պարտավոր է նշել կանալային օդափոխիչների արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը, որ էլ հիմք կարող էր հանդիսանալ մասնակցի հայտը մերժելու համար:

բ) «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ում 1-ից 9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների համար հստակ և ամբողջությամբ ամրագրվել են Ընթացակարգի հրավերի տվյալ ապրանքի համար նախատեսված տեխնիկական բնութագիրը: Այլ կերպ ասած, ՍՊԸ-ի կողմից 1-ից 9-րդ տողերով առաջարկվել են այնպիսի ապրանքնատեսակ, որի համար նշվել են Ընթացակարգի Հրավերի բոլոր տեխնիկական պարամետրերը: Պատվիրատուն ենթադրություն է արել, որ նշված ապրանքը հանդիսանում է կանալային օդափոխիչների

փոխարեն կանալային օդորակիչների ներքին բլոկ, միայն հիմք ընդունելով առաջարկված ապրանքատեսակի մոդելը: Մինչդեռ, իր կողմից տրված Հավելված 1.1-ով ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող կանալային օդափոխիչ, այլ ոչ թե կանալային օդարակիչների ներքին բլոկ և նշել Հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր համապատասխան պարամետրերը: Գտնում ենք, որ նման պայմաններում, երբ ՍՊԸ-ի ներկայացրած Հայելված 1.1. բովանդակությունը ամբողջությամբ և տառացիորեն կրկնում է Հրավերի տեքստը, Պատվիրատուն չէր կարող ամրագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտում և այդ հիմքով մերժեր մասնակցի հայտը:

գ) Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ մինչև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելը «Կոնսէլ» ՍՊԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի միջև ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին պահանջի դեպքում կտրամադրվի մրցույթով նախատեսված կանալային օդափոխիչներ մրցույթի համապատասխան տեխնիկական պարամետրերով: Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ն հանդիսանում է Mitsubishi Electric պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում և ներմուծում է Mitsubishi Electric օդակարգավորման և օդափոխման տարբեր համակարգեր:

դ) Ինչ վերաբերում է օդակարգավորման և օդափոխման համակարգերի կոնկրետ մոդելների, ապա տեղեկացնում ենք, որ օդակարգավորման և օդափոխման կոնկրետ համակարգի մակնիշավորումը կարող է իրականացվել անհատապես՝ հատուկ պատվերի դեպքում պահանջված ապրանքը անհատական մակնիշավորելու արդյունքում:

ե) Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն կարևոր հանգամանքի վրա, որ նույն պատվիրատուի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/13 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով որպես կանալային օդափոխիչներ առաջարկվել են նաև այս մրցույթի շրջանակներում առաջարկված Mitsubishi Electric նույն մոդելի կանալային օդափոխիչները և գնահատող հնաձնաժողովը չի գտել, որ նշված մոդելը ոչ թե կանալային օդափոխիչ է, այլ կանալային

օդարակիչների ներքին բլոկ: Նման պայմաններում ավելի քան անհասկանալի է, որ ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/13 ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատվում է հրավերի պահանջներին բավարարող, իսկ մեկ այլ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքում նույն պատվիրատուն գտնում է, որ առաջարկվող մոդելը կանալային օդորակիչ չէ, այլ դրա ներքին բլոկն է:

զ) Եվ վերջապես, ամենակարևորը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իր կայացրած որոշմամբ ուղղակի վերացական արձանագրել է, որ Հավելված 1.1-ի 1-ից 9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդարակիչների ներքին բլոկ: Մինչդեռ Հավելված 1.1-ի 1-ից 9-րդ տողերում որևէ տեղ նշված չէ, որ ՍՊԸ-ն կանալային օդափոխիչների փոխարեն առաջարկում է կանալային օղորակիչների ներքին բլոկ: Թե նման եզրահանգում ինչի հիման վրա է կատարվել գնահատող հանձնաժողովի կողմից, մասնակցի համար մնում է անհայտ: Ավելին, առաջարկվող կանալային օդորակիչների համար մասնակիցը ներկայացրել է Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին իդենտիկ տեխնիկական բնութագիր և նման պայմաններում անհայտ է մնում, թե ինչն է ստիպել գնահատող հանձնաժողովին արձանագրել, որ առաջարկվող ապրանքը ոչ թե կանալային օդափոխիչ է, այլ կանալային օդորակիչների ներքին բլոկ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2020/275 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ով՝ Մասնակցի կողմից առաջարկվող սարքերի ու սարքավորումների նկարագրի համաձայն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսվել է «կանալային օդափոխիչ» սարքավորումը:

iii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

iv. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.11.2020թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացված Հավելված N 1.1-ում 1-ից 17-րդ տողերում բացակայում է մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը:

vi. Նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.11.2020թ.-ը ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 20.11.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի՝ gevorg.grigoryan.1996@inbox.ru էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 2.3 արձանագրությունը և որպես ծանուցման բովանդակություն նշվել է հետևյալը՝ «Ծանուցում «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին»:

viii. Հանձնաժողովի 24.11.2020թ.-ի նիստի թիվ 2.4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված N 1.1-ի 1-ից 9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդորակիչների ներքին բլոկ:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

x. «Mitsubishi Electric» ընկերության պաշտոնական դիստրիբյուտոր «Կոնսէլ» ՍՊԸ-ի պաշտոնական www.consel.am կայքում առկա տեղեկատվության համաձայն՝ «Mitsubishi Electric» ընկերության արտադրության PEAD-RP JA(L)Q մոդելի օդորակիչները հանդիսանում են կանալային օդորակիչների բլոկներ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված

կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Նույն ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող սարքերի և սարքավորումների նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 22.10.2020թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից հայտին կից ներկայացված Հավելված N 1.1-ում 1-ից 17-րդ տողերում բացակայում է մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչով պայմանավորված նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է կասեցնել նիստը և ծանուցել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.11.2020թ.-ը ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 20.11.2020թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի՝ gevorg.grigoryan.1996@inbox.ru էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել Հանձնաժողովի 2.3 արձանագրությունը և որպես ծանուցման բովանդակություն նշվել է հետևյալը՝ «Ծանուցում «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին: Հանձնաժողովի 24.11.2020թ.-ի նիստի թիվ 2.4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանություն-

ները, մասնավորապես՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված N 1.1-ի 1-ից 9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդորակիչների ներքին բլոկ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները, որոշել է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ «Mitsubishi Electric» ընկերության պաշտոնական դիստրիբյուտոր «Կոնսէլ» ՍՊԸ-ի պաշտոնական www.consel.am կայքում առկա տեղեկատվության համաձայն Մասնակցի կողմից Հավելված 1.1-ով առաջարկած «Mitsubishi Electric» ընկերության արտադրության PEAD-RP JA(L)Q մոդելի օդորակիչները հանդիսանում են կանալային օդորակիչների բլոկներ: Ընդ որում, նույնը պետք է փաստել նաև Մասնակցի կողմից ներկայացրած դիրքորոշմամբ առկա հղմամբ՝ http://www.mitsubishielectric.com.ua/pead-rp-jalq.html, առկա տեղեկատվության վերաբերյալ, քանի որ Հրավերով պահանջվել է ներկայացնել ոչ թե օդորակիչ (“кондиционер”), ինչպես նշված է հղմամբ, այլ օդափոխիչ (“вентилятор”):

Անդրադառնալով Մասնակցի դիրքորոշմամբ նշված մյուս հիմքերին ու փաստական հանգամանքներին, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների մոդելները, արտադրողները (առկայության դեպքում), տեխնիկական բնութագրերը և երաշխիքային ժամկետները:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հրավերով հստակ սահմանվել է, որ Մասնակիցը պարտավոր է նշել կանալային օդափոխիչների արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ օդափոխիչն էլ պետք է մատակարարվի վերջինիս կողմից:

Եվ վերջապես՝ Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած

տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ հրատապ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.12.2020թ.-ի թիվ 26/26-1/18215-2020 գրությամբ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/275 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**